ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-4/9-1

ք. Երևան «19» 05 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հասցեած ապրանքից պայմանագրիս համապատասխան որաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 315367494 (երեք հարյուր տասնհինգ միլիոն երեք հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր ինսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի սատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան Նար Դոսի 122
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	ՀՀ 2050022326481001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 09209297
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-4/9-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Առաջարկվող ապրանքի					
	անվանումը	արտադրողը	ապրանքային նշանը	ֆիրմային անվանումը	մակնիշը	տեխնիկական բնութագիրը
1	Ավտոմեքենաների անիվներ, անվադող 215/90-15C	KAMA / Алтайский шинный комбинат	Я-245-1 / Я-245	KAMA / Алтайский шинный комбинат	215/90-15C	Նշանակությունը Անվադող ունիվերսալ,ՌԻՍԱՉ մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով. Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ K(110), Անվադողի բեռնվածության ինդեքսը 99, Անվադողի բեռնվածությունը /կգ 775, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
2	Ավտոմեքենաների անիվներ անվադող 225/75R16	GOODYEAR	Wrangler All-Terrain Adventure	GOODYEAR	225/75R16	Նշանակությունը Անվադող ամառային, ներքին կառուցվածքը-կևվլարից (KEVLAR, DuPont.TM),ՌԻՍԱՉ, ՏՈՅՈՏԱ-ՀԻԼՅՈՒՔՍ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ T(190), Անվադողի բեռնվածության ինդեքսը 108, Անվադողի բեռնվածությունը /կգ 1000, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
3	Ավտոմեքենաների անիվներ անվադող 8,25R20	ОМСКШИНА / Алтайский шинный комбинат	У-2 / КИ-63	ОМСКШИНА / Алтайский шинный комбинат	8,25R20	Նշանակությունը պահեստաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ ԳԱԶ-53, ՊԱԶ մակնիշի ԱՏ-ների կամ համարժեք այլ տեխնիկայի համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR10, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ J(100), Անվադողի բեռնվածության ինդեքսը 125/122, Անվադողի բեռնվածությունը /կգ 1650/1500, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ
4	Ավտոմեքենաների անիվներ անվադող 9,00R20	ОМСКШИНА / КАМА	И-Н142Б-1 / И-Н142 БМ	ОМСКШИНА / КАМА	9,00R20	Նշանակությունը պահեստաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ ԿԱՄԱԶ-5320, ՉԻԼ-130 մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR14, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ J(100), Անվադողի բեռնվածության ինդեքսը, 140/137, Անվադողի բեռնվածությունը /կգ 2500/2300, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ
8	Ավտոմեքենաների անիվներ անվադող 12,00R24	TORQUE	TQ322	TORQUE	12,00R24	Նշանակությունը պահեստաշերտի գծանկարը-ունիվերսալ, կառուցվածքը-UMK, all steel radial steel (ամբողջական մետաղական կառուցվածքով), ՀԻՆՈ-700 բարշակի համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR20, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ K(110), Անվադողի բեռնվածության ինդեքսը 160/157 Անվադողի բեռնվածությունը /կգ 4000/4125, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
9	Ավտոմեքենաների անիվներ անվադող 11,00R20	ОМСКШИНА / Алтайский шинный комбинат	И-111АМ / И-111А	ОМСКШИНА / Алтайский шинный комбинат	11,00R20	Նշանակությունը պահեստաշերտի գծանկարը-ճանապարհային,դողի կառուցվածքը՝ ռադիալ ԿԱԱԶ, ՍԱԶ և կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR16, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ K(110), Անվադողի բեռնվածության ինդեքսը 150/146, Անվադողի բեռնվածությունը /կգ 3350/3000, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ
11	Ավտոմեքենաների անիվներ անվադող 12,00R20	ОМСКШИНА / Алтайский шинный комбинат	ИД-304М,У-4 / ИД-304	ОМСКШИНА / Алтайский шинный комбинат	12,00R20	Նշանակությունը պահեստաշերտի գծանկարը-ունիվերսալ,դողի կառուցվածքը՝ ռադիալ ՍԱԶ, Դ-1, Դ-20, ԿՍ-19 հատուկ տեխնիկայի համար կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR18, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ J(100), Անվադողի բեռնվածության ինդեքսը 154/149 Անվադողի բեռնվածությունը /կգ 3750/3250, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
12	Անվադող 18.00-24 (1600x500-610)	FOREVER / RIOSTONE	E-2	FOREVER / RIOSTONE	18.00-24 (1600x500 -610)	Նշանակությունը Մոդելը՝ ՍԱԶ-537-ի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR24, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ E(70), Անվադողի բեռնվածությունը /կգ 8200, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
13	Ավտոմեքենաների անիվներ անվադող 12,00-18	ОМСКШИНА	К-70	ОМСКШИНА	12,00-18	Նշանակությունը պահեստաշերտը գծանկարը բարձր անցողության ,դողի կառուցվածքը՝ դիագոնալ, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով, Անվադողի շերտայնությունը PR8, Անվադողի սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ J(100), Անվադողի բեռնվածության ինդեքսը 129, Անվադողի բեռնվածությունը /կգ 1850, Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ :
14	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-60	ПрАо "Ста-Центр" / " DOZ" Energoavtomatika"	Feon	ПрАо "Ста-Центр" / " DOZ" Energoavtomatika"	6US-60	Կապարաթթվային կուտակիչի տեսակը 6US-60 Նոմինալ ունակությունը Ամ/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)-60 Լիցքաթափման հոսանքը -18°C-ի դեպքում ոչ պակաս /Ա EN 480 Սեղմակները ըստ ստանդարտի կոնուսն Բևեռականությունը 1;0 Չափերը /մմ (թույլատրելի շեղումը +/- (1%-5%)) Երկարությունը-242, Լայնությունը-175 Բարձրությունը-190 Բռնակի ձևը 1P կամ 2P Կափարիչի ձևը Միաձույլ Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ 2.1. արտադրության տարեթիվը սկսած 2020 թ. հունվարի 1-ից
15	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-75	ПрАо "Ста-Центр" / " DOZ" Energoavtomatika"	Feon	ПрАо "Ста-Центр" / " DOZ" Energoavtomatika"	6US-75	Կապարաթթվային կուտակիչի տեսակը 6US-75 Նոմինալ ունակությունը /Ամ/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)-75 Լիցքաթափման հոսանքը -18°C-ի դեպքում ոչ պակաս /Ա EN 640 Սեղմակները ըստ ստանդարտի կոնուսն Բևեռականությունը 1;0 Չափերը /մմ (թույլատրելի շեղումը +/- (1%-5%)) Երկարությունը-276, Լայնությունը-175 Բարձրությունը-190 Բռնակի ձևը 1P կամ 2P Կափարիչի ձևը Միաձույլ Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ 2.7. արտադրության տարեթիվը սկսած 2020 թ. հունվարի 1-ից
16	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-90	ПрАо "Ста-Центр" / " DOZ" Energoavtomatika"	Feon	ПрАо "Ста-Центр" / " DOZ" Energoavtomatika"	6US-90	Կապարաթթվային կուտակիչի տեսակը6US-90 Նոմինալ ունակությունը /Ամ/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)-90 Լիցքաթափման հոսանքը -18°C-ի դեպքում ոչ պակաս /Ա EN 720 Սեղմակները ըստ ստանդարտի կոնուսն Բևեռականությունը 1;0 Չափերը /մմ (թույլատրելի շեղումը +/- (1%-5%)) Երկարությունը-353, Լայնությունը-175 Բարձրությունը-190 Բռնակի ձևը 1P կամ 2P Կափարիչի ձևը Միաձույլ Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ 3.2. արտադրության տարեթիվը սկսած 2020 թ. հունվարի 1-ից
17	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-140	ПрАо "Ста-Центр" / " ISTA-CENTR"	Feon	ПрАо "Ста-Центр" / " ISTA-CENTR"	6US-140	Կապարաթթվային կուտակիչի տեսակը6US-140 Նոմինալ ունակությունը /Ամ/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)-140 Լիցքաթափման հոսանքը -18°C-ի դեպքում ոչ պակաս /Ա EN 900 Սեղմակները ըստ ստանդարտի կոնուսն Բևեռականությունը 1;0 Չափերը /մմ (թույլատրելի շեղումը +/- (1%-5%)) Երկարությունը-513, Լայնությունը-189 Բարձրությունը-223 Բռնակի ձևը 2W կամ 2P Կափարիչի ձևը Միաձույլ Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ 6. արտադրության տարեթիվը սկսած 2020 թ. հունվարի 1-ից

Ծանոթություն՝

1. Անվադողերը ըստ տեխնիկական բնութագրի պետք է համալրված լինեն անվախուցով , անվադողի ժապավենով և անվախուցի փականով:
2. Այն անվադողերը, որոնց տեխնիկական բնութագրերով նշված է << ամառային>>, անվադողի վրա պետք է նշված լինեն՝ <<M+S կամ all season>>, իսկ <<ձմեռային>>՝ անվադողերի դեպքում <<*>> (ձյան փաթիլի նույնանիշը):
3. Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
4. տեխնիկական բնութագրի հետ միաժամանակ մասնակիցների կողմից ներկայացվեն առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում) և մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող անվադողի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատը:
5. Անվադողերի երաշխիքային ժամկետը ապրանքը ընդունելու օրվանից հաշված1 տարի կամ 5000կմ վազք աշխատատնողությամբ:
6.Մատակարարված անվադողերի ժամանակից շուտ շարքից դուրս գալու դեպքում, բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, ստորաբաժանման) և մատակարար կազմակերպության մասնագետների անմիջական մասնակցությամբ, արտադրական խոտանի դեպքում վերականգնումը մատակարարող կազմակերպության կողմից նմանատիպ ապրանքով՝ նախապես հաշվի առնելով ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառները, մնացած դեպքերում ըստ ուսումնասիրությունների արդյունքների:
7. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
8. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

Ծանոթություն՝

1. Կոտակիչ մարտկոցները ըստ տեսակների մատակարարել չոր չլիցքավորված վիճակում, արտադրության տարեթիվը սկսած 2020 թ. հունվարի 1-ից: Ընթացիկ անհրաժեշտությունից ելնելով, համապատասխան քանակի (պայմանագրով նախատեսված քանակից ոչ ավելի) և տեսակի չոր չլիցքավորված կոտակիչ մարտկոցները մատակարար ընկերության կողմից լիցքավորել և սպասարկել կամ մատակարարել լիցքավորված վիճակում՝ ըստ պատվիրատուի պահանջի (ըստ պայմանավորվածության): Լիցքավորված կոտակիչ մարտկոցների մատակարարման դեպքում տվյալ քանակի մասով ծծմբական թթու չի պահանջվում:
2. Չոր չլիցքավորված կոտակիչ մարտկոցների (յուրաքանչյուր կոտակիչ մարտկոցի համար ըստ վերոնշված քանակի) համապատասխան քանակի ծծմբական թթուն (1,23 խտության) մատակարարել տարաներով՝ ըստ ընդհանուր մատակարարվող համապատասխան քանակների:
3. Ըստ մատակարարի նախապես ներկայացված պահանջի, դատարկ տարաները խմբաքանակներով հետ կվերադարձվեն՝ համապատասխան քանակի ծծմբական թթուն օգտագործելուց հետո:
4. Կոտակիչ մարտկոցների համար անհրաժեշտ երաշխիքային պայմանները:
4.1 Սահմանված կարգով պայմանների պահպանման դեպքում՝ չոր չլիցքավորված կոտակիչ մարտկոցների երաշխիքային պահպանման ժամկետը պետք է լինի 5 տարի, աշխատանքային վիճակի բերված կոտակիչ մարտկոցների երաշխիքային շահագործման ժամկետը պետք է լինի 2 տարի, ժամկետը սկսվում է էլեկտրալուծույթը մարտկոցների մեջ լցնելու պահից, որոնց հաշվառումը տարվում է ՀՀ ԶՈՒ համապատասխան զորամասերում:
4.2 Մատակարարման ենթակա, աշխատանքային վիճակի բերված կոտակիչ մարտկոցները պետք է ունենան նախագծումը 4 տարի կամ 75000կմ վազք շահագործման աշխատատնողության ժամկետ (հատուկ նշանակության ավտոմոբիլների կոտակիչ մարտկոցների աշխատատնողության նորմերը նվազեցվում են 15%-ով):
5. Բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, ստորաբաժանման) և վաճառող կազմակերպության անմիջական մասնակցությամբ, այդ թվում ներառյալ վերանորոգում կամ վերականգնում նմանատիպ առարկայով (երաշխիքով)՝ հաշվի առնելով անսարքության պատճառները:
6. Յուրաքանչյուր կոտակիչ մարտկոցի հետ առկա լինի հայերեն լեզվով տեխնիկական անձնագիրը, որի մեջ մատնելի կերպով արտացոլված լինի կոտակիչ մարտկոցի լիցքավորման կարգը, տեխնիկական պարամետրերը, ապասարկման կարգը՝ մշտապես և ոչ մշտապես օգտագործման դեպքում, չոր լիցքավորված, չոր չլիցքավորված և լիցքավորված կոտակիչ մարտկոցների երկարատև ու կարճատև պահպանման կարգը, էլեկտրալուծույթի ծավալի ճվազեցման դեպքում ծավալի վերականգնման կարգը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:
7. տեխնիկական բնութագրի հետ միաժամանակ մասնակիցների կողմից ներկայացվեն առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում), իսկ մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող կոտակիչ մարտկոցի արտադրողի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատը , որտեղ արտացոլվի որակը հավաստող ու տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները:
8. Կոտակիչ մարտկոցները պետք է լինեն չօգտագործված:
9. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ Տնօրեն

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Անվանումը	Հ/Մ	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2020թ գնման ժամանակացույց ըստ եռամսյակների	
						II-րդ	III-րդ
1	Ավտոմեքենաների անիվներ	հատ	549	24338	13361562	300	249
2	Ավտոմեքենաների անիվներ	հատ	700	74798	52358600	700	
3	Ավտոմեքենաների անիվներ	հատ	360	43638	15709680	200	160
4	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	54798	16439400	150	150
8	Ավտոմեքենաների անիվներ	հատ	249	149638	37259862	249	
9	Ավտոմեքենաների անիվներ	հատ	200	84638	16927600	200	
11	Ավտոմեքենաների անիվներ	հատ	242	99798	24151116	120	122
12	Ավտոմեքենաների անիվներ	հատ	8	1299798	10398384		8
13	Ավտոմեքենաների անիվներ	հատ	390	163398	63725220	300	90
14	կոտակիչ մարտկոցներ	հատ	500	23638	11819000	250	250
15	կոտակիչ մարտկոցներ	հատ	355	30638	10876490	200	155
16	կոտակիչ մարտկոցներ	հատ	550	36638	20150900	300	250
17	կոտակիչ մարտկոցներ	հատ	360	61638	22189680	200	160

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-4/9-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի								
չ/h	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/12	8016937	8016937	8016937	13361562	13361562	13361562
2	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/13	52358600	52358600	52358600	52358600	52358600	52358600
3	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/61	9425808	9425808	9425808	15709680	15709680	15709680
4	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/62	8219700	8219700	8219700	16439400	16439400	16439400
8	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/75	37259862	37259862	37259862	37259862	37259862	37259862
9	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/76	16927600	16927600	16927600	16927600	16927600	16927600
11	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/81	12075558	12075558	12075558	24151116	24151116	24151116
12	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/83				10398384	10398384	10398384
13	Ավտոմեքենաների անվադողեր	34351200/60	47793915	47793915	47793915	63725220	63725220	63725220
14	Կոտակիչ մարտկոցներ	31442100/2	5909500	5909500	5909500	11819000	11819000	11819000
15	Կոտակիչ մարտկոցներ	31442100/6	6525894	6525894	6525894	10876490	10876490	10876490
16	Կոտակիչ մարտկոցներ	31442100/7	12090540	12090540	12090540	20150900	20150900	20150900
17	Կոտակիչ մարտկոցներ	31442100/12	13313808	13313808	13313808	22189680	22189680	22189680

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ Տնօրեն

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-4/9-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« ե « ե 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____ե «_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « ե « ե 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-4/9-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն